ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 16.03.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-13/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.11.2016թ. թիվ 03/73-3/25206-16 և 28.02.2017թ. թիվ 03/73-3/3240-17 գրություններով ներկայացված «ՍՊ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-13/17 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-13/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 13.03.2017թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 03.11.2016թ. թիվ ԴՎԱ/3448 գրության հիման վրա, 10.11.2016թ. թիվ 03/73-3/25206-16

գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «ՍՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ «ՍՊ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 13.12.2016թ. թիվ 01/04.1/4546-16 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 10.11.2016թ. թիվ 03/73-3/25206-16 գրության հիման վրա, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով արձանագրել է «ՍՊ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միաժամանակ Կենտրոնը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ընկերությանը ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ, քանի որ Օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտել է, որ խախտումը թույլ տալու պահից (14.10.2016թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելու հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «ՍՊ» ՍՊԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 28.02.2017թ. թիվ 03/73-3/3240-17 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/21» ծածկագրով ընթացակարգին «ՍՊ» ՍՊԸ-ն 06.12.2016թ. մասնակցության հայտ է ներկայացրել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 124-րդ կետի 2-րդ ենթակետը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **«ՍՊ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 11.11.2016թ. թիվ 01/04.1/4086-16 գրությամբ դիմել է «ՍՊ» ՍՊԸ-ին, սակայն Ընկերության կողմից կարծիք չի ներկայացվել:

«ՍՊ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 10.03.2017թ. ժամը 17:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-13/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 03.11.2016թ. թիվ ԴՎԱ/3448 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) հիմք ընդունելով Պատվիրատուի և «ՍՊ» ՍՊԸ-ի միջև 01.07.2016թ. կնքված ՇՀԱՊՁԲ-7/39-5 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմանագիր) 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ 14.10.2016թ. (խմելու ջրի տարաներ, տափաշիշ՝ ալյումինե, կաթսաներ, կաթսա՝ կոտելոկ ալյումինե, ջրի շշի կրիչներ, տափաշշի շապիկ, ակնոց՝ դահուկորդի) ապրանքատեսակների մասով միակողմանի լուծել է 01.07.2016թ. կնքված Պայմանագիրը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 22.02.2017թ. թիվ ԴՎԱ/427 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հանդերձանքի

ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/21» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել «ՍՊ» ՍՊԸ-ն և ներկայացրել է Ընկերության կողմից հայտ ներկայացնելու ամսաթիվը պարունակող Armeps համակարգի համապատասխան էջի քաղվածքը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով 10.03.2017թ. ժամը 17:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-13/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ԳԲԽ-13/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 13.03.2017թ. եզրակացությունը և առաջարկել ՀՀ ֆինանսների նախարարության 10.11.2016թ. թիվ 03/73-3/25206-16 և 28.02.2017թ. թիվ 03/73-3/3240-17 գրություններով ներկայացված «ՍՊ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02533994) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երեք տարի ժամկետով:

5. **<u>ՍՑ-ԳԲԽ-13/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարության 10.11.2016թ. թիվ 03/73-3/25206-16 և 28.02.2017թ. թիվ 03/73-3/3240-17 գրություններով ներկայացված «ՍՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու

պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «ՍՊ» ՍՊԸ-ի միջև 01.07.2016թ. կնքվել է «ՇՀԱՊՁԲ-7/39-5» ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիրը:

2. Պայմանագրի N 2 հավելված գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պատվիրատուին մատակարարել հետևալ Ապրանքները. խմելու ջրի տարաներ (տափաշիշ՝ այլումինե) 10.000 հատ՝ հուլիս ամսին, կաթսաներ (կաթսա/կոտելոկ՝ այլումինե) 10495 հատ՝ հուլիս ամսին, ջրի շշերի կրիչներ (տափաշշի շապիկ)՝ 10 000 հատ, որից 4000 հատը՝ սեպտեմբեր ամսին, 4000 հատը՝ հոկտեմբեր ամսին, 2000 հատը՝ նոյեմբերին ամսին, թիկնապայուսակ (ուսապարկ)՝ 11172 հատ՝ հուլիս ամսին, ակնոցներ (ակնոց՝ դահուկորդի)՝ 2000 հատ՝ հուլիս ամսին, գոտիներ (տոնական սպայական)՝ 8000 հատ օգոստոս ամսին:

3. Ընկերությանն ուղղված 03.10.2016թ. թիվ ԴՎԱ/2983 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ Պայմանագրով նախատեսված Ապրանքներից 01.10.2016թ. դրությամբ Ընկերության կողմից պակաս է մատակարարվել խմելու ջրի տարաներ (տափաշիշ՝ այլումինե)՝ 10.000 հատ, կաթսաներ (կաթսա/կոտելոկ՝ այլումինե)՝ 10495 հատ, թիկնապայուսակ (ուսապարկ)՝ 11172 հատ, ակնոցներ (ակնոց՝ դահուկորդի)՝ 2000 հատ, գոտիներ (տոնական սպայական)՝ 7250 հատ:

4. Պատվիրատուին ուղղված 13.10.2016թ. թիվ SP-10/036 գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ Ընկերության և Պատվիրատուի միջև 01.07.2016թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-7/39-5» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված Ապրանքներից՝

1. խմելու ջրի տարաներ (տափաշիշ՝ այլումինե) - 10 000 հատ, միավորի գինը՝ 990 ՀՀ դրամ,
2. կաթսաներ (կաթսա/կոտելոկ՝ այլումինե) - 10495 հատ, միավորի գինը՝ 980 ՀՀ դրամ,
3. ջրի շշերի կրիչներ (տափաշշի շապիկ) - 10 000 հատ, միավորի գինը՝ 135 ՀՀ դրամ,
4. ակնոցներ (ակնոց՝ դահուկորդի) – 2000 հատ, միավորի գինը՝ 1170 ՀՀ դրամ

մատակարարումը Ընկերության կողմից դարձել է անհնար՝ Ընկերության մարքեթինգային

բաժնի կողմից թույլ տրված սխալ հաշվարկի պատճառով, որի հետևանքով Ընկերությունը նշված գնման ընթացակարգին մասնակցել է ոչ ճիշտ գնային առաջարկով:

5. ՀՀ պաշտպանության նախարարությունը 24.10.2016թ. Ընկերությանն ուղղված ԴՎԱ/321 գրությամբ հայտնել է, որ Պայմանագրով նախատեսված վերոհիշյալ Ապրանքները 13.10.2016թ. դրությամբ ընդհանրապես չեն մատակարարվել և Ընկերությունը 13.10.2016թ. թիվ SP-10/036 գրությամբ հրաժարվել է մատակարարել վերոհիշյալ ապրանքները, ուստի Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը, վերոնշյալ չմատակարարված Ապանքների մասով 14.10.2016թ. լուծում է Պայմանագիրը:

6. Կենտրոնը 13.12.2016թ. թիվ 01/04.1/4546-16 գրությամբ արձանագրել է «ՍՊ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը, միևնույն ժամանակ հաշվի առնելով Ընկերության կողմից խախտումը թույլ տալու օրվանից ***(14.10.2016թ.)*** հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ տեղեկատվության բացակայության հանգամանքը, գտել է, որ Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

7. «ՍՊ» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/21» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին ***06.12.2016թ.*** մասնակցության հայտ է ներկայացրել:

8. Ընկերության կողմից 04.11.2016թ. ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան հաշվեհամարին վճարվել է 23 375 269 ՀՀ դրամ, որից՝ 22 538 330 ՀՀ դրամը որպես «ՇՀԱՊՁԲ-7/39-5» ծածկագրով Պայմանագրի ապահովում և 836 939 ՀՀ դրամը՝ որպես տույժ Պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները խախտելու համար:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ պաշտպանության նախարարություն 03.11.2016թ. թիվ ԴՎԱ/3448 և 22.02.2017թ. թիվ ԴՎԱ/427 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ***ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորություն***, ***որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Պայմանագրի 3.1.7 կետը սահմանում է, որ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Նույն կետի 3.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավել:

Այսպիսով, Ընկերությունը Պայմանագրի N 2 հավելվածի համաձայն, պարտավորվել է մատակարարել հետևալ Ապրանքները. խմելու ջրի տարաներ (տափաշիշ՝ այլումինե) 10.000 հատ՝ հուլիս ամսին, կաթսաներ (կաթսա/կոտելոկ՝ այլումինե) 10495 հատ՝ հուլիս ամսին, ջրի 22երի կրիչներ (տափաշշի շապիկ)՝ 10 000 հատ, որից 4000 հատը՝ սեպտեմբեր ամսին, 4000 հատը՝ հոկտեմբեր ամսին, 2000 հատը՝ նոյեմբերին ամսին,

թիկնապայուսակ (ուսապարկ)՝ 11172 հատ՝ հուլիս ամսին, ակնոցներ (ակնոց՝ դահուկորդի)՝ 2000 հատ՝ հուլիս ամսին, գոտիներ (տոնական սպայական)՝ 8000 հատ՝ օգոստոս ամսին:

ՀՀ պաշտպանության նախարարությունը Ընկերությանն ուղղված 03.10.2016թ. թիվ ԴՎԱ/2983 գրությամբ հայտնել է, որ Պայմանագրով նախատեսված Ապրանքներից ***01.10.2016թ. դրությամբ*** Ընկերության կողմից պակաս է մատակարարվել՝ խմելու ջրի տարաներ (տափաշիշ՝ այլումինե)՝ 10.000 հատ, կաթսաներ (կաթսա/կոտելոկ՝ այլումինե)՝ 10495 հատ, թիկնապայուսակ (ուսապարկ)՝ 11172 հատ, ակնոցներ (ակնոց՝ դահուկորդի)՝ 2000 հատ, գոտիներ (տոնական սպայական)՝ 7250 հատ:

Նշված գրությամբ Պատվիրատուն Ընկերությանը հայտնել է, որ անհրաժեշտ է սեղմ ժամկետներում կարգավորել մատակարարումների ընթացքը՝ հակառակ դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կսկսի Պայմանագրի միակողմանի լուծարման գործընթաց:

Ընկերությունը ՀՀ պաշտպանության նախարարությանը 13.10.2016թ. թիվ SP-10/036 գրությամբ հայտնել է որ «ՍՊ» ՍՊԸ-ի և Պատվիրատուի միջև 01.07.2016թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-7/39-5» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված Ապրանքներից՝

1. խմելու ջրի տարաներ (տափաշիշ՝ այլումինե) - 10 000 հատ, միավորի գինը՝ 990 ՀՀ դրամ,
2. կաթսաներ (կաթսա/կոտելոկ՝ այլումինե) - 10495 հատ, միավորի գինը՝ 980 ՀՀ դրամ
3. ջրի շշերի կրիչներ (տափաշշի շապիկ) - 10 000 հատ, միավորի գինը՝ 135 ՀՀ դրամ,
4. ակնոցներ (ակնոց՝ դահուկորդի) – 2000 հատ, միավորի գինը՝ 1170 ՀՀ դրամ

մատակարարումը Ընկերության կողմից դարձել է անհնար՝ Ընկերության մարքեթինգային բաժնի կողմից թույլ տրված սխալ հաշվարկի պատճառով, որի հետևանքով Ընկերությունը նշված գնման ընթացակարգին մասնակցել է ոչ ճիշտ գնային առաջարկով:

Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը, վերոնշյալ չմատակարարված Ապրանքների մասով ***14.10.2016թ.*** լուծել է Պայմանագիրը, որի մասին 24.10.2016թ. գրությամբ ծանուցել է «ՍՊ» ՍՊԸ-ին:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը թույլ է տվել «ՍՊ» ՍՊԸ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 01.07.2016թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-7/39-5» ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագրով նախատեսված

պարտավորության մեկից ավելի անգամ խախտում, քանի որ Ընկերությունը ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղղված համապատասխան գրությամբ հրաժարվել է մատակարարել թվով չորս ապրանքատեսակ, և փաստացի չմատակարարելով վերոհիշյալ ապրանքները, թույլ է տվել Պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետով նախատեսված էական խախտում, այն է՝ համապատասխան ապրանքների մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավել ժամկետով, որի արդյունքում Պատվիրատուն մասնակի լուծել է Պայմանագիրը:

Միևնույն ժամանակ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում</u>** ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «ա» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «ՍՊ» ՍՊԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում Ընկերությունը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 22.02.2017թ. թիվ ԴՎԱ/427 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/21» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով «ՍՊ» ՍՊԸ-ն ***06.12.2016թ.*** հայտ է ներկայացրել:

Այսպիսով՝ Խորհուրդն արձանագրում է, որ «ՍՊ» ՍՊԸ-ի վերաբերյալ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը ***14.10.2016թ.*** թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված պայմանագրային պարտավորության մեկից ավելի խախտում, որից հետո ***06.12.2016թ.*** կրկին հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/21» ծածկագրով ընթացակարգին:

Կարգի 125-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ ***3 տարի ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը:***

ՀՀ պաշտպանության նախարարության 14.10.2016թ. թիվ ԴՎԱ/3321 գրության համաձայն՝ Ընկերության կողմից վճարվելիք «ՇՀԱՊՁԲ-7/39-5» ծածկագրով պայմանագրի ապահովման և Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետները խախտելու համար տուժանքի ընդհանուր գումարի չափը կազմել է ***23 375 269 ՀՀ դրամ, որը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը:***

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 10.11.2016թ. թիվ 03/73-3/25206-16 և 28.02.2017թ. թիվ 03/73-3/3240-17 գրություններով ներկայացված «ՍՊ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02533994) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երեք տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Հայրապետյան Գևորգ**

Անդամ՝ **Խաչատրյան Հայկ**